

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 2011

2011 թվականին մարզպետարանի ենթակայությամբ գործել են 93 կրթական հաստատություններ, որոնցից 59-ը՝ միջնակարգ հանրակրթական, 31-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/: Երկու նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնարաններ 2011 թվականի դեկտեմբերին հանձնել ենք ԿԳ նախարարությանը, ինչպես նաև 11 ավագ դպրոցներ, տարբեր ենթակայության 2 կրթահամալիր, 1 մասնավոր դպրոց:

Մարզի հանրակրթական դպրոցներում 2011-12 ուսումնական տարում կոմպլեկտավորվել է 1674 դասարան՝ 34688 աշակերտներով: Այս ուսումնական տարում առաջին դասարան է ընդունվել 3360 աշակերտ, որը նախորդ ուսումնական տարվա հետ համեմատությամբ նվազել է շուրջ 95 –ով: Մարզի ներսում կատարվել է դպրոցից դպրոց սովորողի ընդունելության ներքին շարժի համար նախատեսված, ինչպես նաև արտերկրի, ՀՀ այլ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունված աշակերտների հաշվառում: Դեկտեմբեր ամսին մարզի 1 ավագ ու 2 հիմնական դպրոցներում /Հրազդանի N1, N11, N4/ փորձական ներդրվել է աշակերտների հաշվառման տեղեկատվական համակարգ, որի նպատակն է ամոռջությամբ վերահսկել աշակերտների շարժը:

2011-2012 ուս տարում աշխատանքներ են տարվել հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց հանրակրթական կամ հատուկ հանրակրթական հաստատություններ վերադարձնելու ուղղությամբ: Այժմ վկայագրված են մարզի 308 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, նրանցից 78-ը վկայագրվել են 2011 թվականին՝ 7-ը վկայագրվել են 2-րդ անգամ: Վկայագրերը տրվել են Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա: Այդ երեխաները ընդգրկվել են ինչպես մարզի տարածքում գործող, այնպես էլ մայրաքաղաքի հատուկ դպրոցներ: 32 աշակերտ ընդգրկվել են Աբովյանի կրթահամալիրում՝ ներառական կրթություն

ստանալու նպատակով, իսկ տնային ուսուցում կազմակերպվել է Քաղսիի, Արամուսի, Չարենցավանի N6, Արովյանի N10, Հրազդանի N6, Գառնիի դպրոցներում:

Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3400 ուսուցիչներ, որոնց ավելի քան 88% ունի բարձրագույն մանկավարժական, շուրջ 10%՝ միջին մասնագիտական, իսկ մնացածը՝ բարձրագույն կամ միջին ոչ մասնագիտական կրթություն: Լեռնային և բարձր լեռնային գոտում գտնվող ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 1100-ը:

Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվել են մրցութային կարգով: Այս տարվա ընթացքում ուսուցիչների մրցույթներ տեղի են ունեցել 60-ից ավել դպրոցներում, իսկ գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար՝ թվով 53 դպրոցներում: Մրցույթների արդյունքում ընտրված 47 տնօրենների հետ սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Աշխատանքից ազատվել են թվով 18 տնօրեններ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պարտադիր ատեստավորման նպատակով 2011 թվականին վերապատրաստվել են մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների շուրջ 20%-ը:

Այս տարի ուսումնական զենքի պահպանման սենյակներ ունեցող դպրոցների թիվը հասել է 91-ի, իսկ դրանցից 83-ն արդեն համալրվել է ուսումնական զենքով:

Մարզի բոլոր միջնակարգ ու հիմնական դպրոցները ստացել են շախմատի դասավանդման համար անհրաժեշտ գույք՝ սեղաններ, աթոռներ, շախմատի խաղաքարեր և դաշտեր:

Դպրոցներում ուսումնանյութատեխնիկական բազան հարստացնելու նպատակով «Փյունիկ» հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում մարզի 19 դպրոցներին հատկացվել են «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների լաբորատոր սարքավորումներ, իսկ 6 դպրոցներ «Չկարդալը վնասակար է» ընթարցանության հանրապետական առաջին մրցույթին մասնակցելու նպատակով իրենց գրադարանային ֆոնդը հարստացրել են «Էդիտ պրինտ» հրատարակչության գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականությամբ:

Մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ կրթակարգի պահանջներին համապատասխան, ապահովված են համակարգիչներով և ինտերնետ կապով: Դպրոցներն ունեն տարբեր առարկաների էլեկտրոնային ձեռնարկներ, որոնց հիման վրա դպրոցների մեծ մասում ստեղծվել են նաև էլեկտրոնային գրադարաններ:

2011 թվականին մարզպետարանի պատվիրատությամբ շինարարական աշխատանքներ են կատարվել 9, իսկ քաղաքաշինության նախարարության պատվիրատությամբ՝ 8 դպրոցներում, 2 մանկապարտեզներում, 2 մարզադպրոցներում: Բալահովիտի, Զորավանի, Մարմարիկի միջնակարգ և Աբովյանի հատուկ /օժանդակ/ դպրոցներում կառուցվել է լոկալ ջեռուցման նոր համակարգեր և այսպիսով մարզի քաղաքային համայնքների բոլոր դպրոցներն ապահովված են լոկալ ջեռուցման համակարգերով, իսկ ամբողջ մարզում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 76 դպրոցներ: Լեռնանիստի, Քաղսիի և Եղվարդի N1 մանկապարտեզներն ամբողջությամբ հիմնանորոգվել են: Վերանորոգվում են Ակունքի ու Գեղադիրի գյուղական համայնքների մանկապարտեզները:

Բյուրեղավանի ավագ դպրոցից մեկ մասնաշենք հանձնվել է համայնքի ենթակայության՝ նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով, որը ևս վերանորոգման ընթացքի մեջ է: Այժմ մարզում գործում են 47 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 18-ը հիմնովին վերանորոգված են: Կատարված աշխատանքների արդյունքում շուրջ 5321 սան հաճախում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Դպրոցներից ստացված դասագրքերի պատվերների նախնական հայտերի հիման վրա կազմվել է մարզին անհրաժեշտ դասագրքերի պատվերը և տրամադրվել է ՀՀ ԿԳ նախարարությանն ու ԴՇՀ-ին: ԴՇՀ-ի միջոցների հաշվին տպագրված 36 անուն 49181 հատ և պետբյուջեի միջոցներով տպագրված 11 անուն 46688 հատ դասագրքերը, ինչպես նաև 24 անուն 26233 հատ մեթոդական ձեռնարկները, օրագրերը, և այլ ուսումնաօժանդակ նյութերը ստացվել, այնուհետև բաշխվել են ըստ դպրոցների: